



Ձ Ե Կ Ո Ւ Յ Ց

ԹԵՄԱ Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները
տարրական դպրոցում

ՀԵՂԻՆԱԿ Ռիտա Շալունց

Քննարկվել, հավանության է արժանացել

մեթոդախաղարման _____ նիստում: Արձանագրություն թիվ _____

Մեթոդախաղարման նախագահ _____
(ստորագրություն)

Ռիտա Շալունց
(ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ _____
(ստորագրություն)

Մերգեյ Ավանեսյան
(ազգանուն, անուն)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում

- 1.1 Տեխնոլոգիա հասկացությունը
- 1.2 Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիա
- 1.3 Նախագծային տեխնոլոգիան տարրական դասարանում
- 1.4 Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում
- 1.5 Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիա
- 1.6 Խաղային տեխնոլոգիաները տարրական դպրոցում

Եզրակացություններ

Օգտագործած գրականության ցանկ

Հավելված

Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը:

Ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման և լավարկման ճանապարհների որոնումը մանկավարժագիտության կարևորագույն հիմնախնդիրներից է: Ժամանակակից մանկավարժագիտության մեջ տարվում են այնպիսի մոտեցումների, ուսուցման այնպիսի մոդելների որոնումներ, որոնք թույլ կտան տվյալ պայմաններում և տվյալ ժամանակահատվածում դրված կրթական նպատակներին հասնելը երաշխավորող աղյուսք: Այդ արդյունքը կարող են ապահովել տարրական դասարաններում կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաները, որոնց առանձնահատկությունների վերհանումն ու արդյունավետության բացահայտումն այժմեական խնդիր է:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցման և դաստիարակության գործընթացում մանկավարժական տեխնոլոգիաների լայն կիրառությունը նշանակում է գոյություն ունեցող պրակտիկայի որոշիչ շրջադարձ մանկավարժական գործընթացի կառուցման և իրականացման ազատականությունից դրա յուրաքանչյուր տարրի և փուլի խիստ հիմնավորման, վերջնական արդյունքին օբյեկտիվ հասնելու նպատակադրություն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները, դրանց դասակարգը, բացահայտել տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

- ուսումնասիրել ուսուցման արդի տեխնոլոգիաները,
- ներկայացնել տարրական դպրոցում կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաները,
- բացահայտել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում:

Հետազոտության թեման ունի տեսական և գործնական ուսումնասիրության կարևորություն, քանի որ կրթության մեջ ժամանակակից տեխնոլոգիաները դիտվում են որպես կրթական նոր հարացույցի իրականացման միջոց:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1 Տեխնոլոգիա հասկացությունը

Տեխնոլոգիան հունարեն բառ է, որ նշանակում է գիտություն արվեստի և վարպետության մասին technu (արվեստ, արհեստ գիտություն), logos (հասկացություն, ուսմունք բառերից): Իսկ արտասահմանյան բառերի բառարանում «Տեխնոլոգիական արտադրական միջոցների եղանակների մասին գիտելիքների իրականացման միջոցների և եղանակների մասին գիտելիքների ամբողջությունն է (քիմիական, մետաղների, սննդի և այլն)»: Տեխնոլոգիայի օգնությամբ մտավոր տեղեկույթը բերվում է գործնական լուծումների: Տեխնոլոգիաները գործունեության եղանակներ են, միաժամանակ նաև այն, թե ինչպես է անձը մասնակցում գործունեությանը: Ցանկացած գործունեություն կարող է լինել կամ տեխնոլոգիա կամ արվեստ: Արվեստը հիմնված է ներմտնողականության, ինտուիցիայի վրա, տեխնոլոգիան՝ գիտության: Ամեն ինչ սկսվում է արվեստից, ավարտվում տեխնոլոգիայով, որպեսզի ամբողջ գործընթացը սկսվի նորից [7, էջ 13]:

Գիտական և մեթոդական գրականության մեջ առկա տեխնոլոգիայի սահմանման տարբերակներից են.

- գործնական նպատակների իրականացման տեխնիկական մեթոդ,
- մարդու գոյատևման համար անհրաժեշտ առարկաների ստացման օգտագործվող եղանակներ,
- մարդկային գործունեության կազմակերպման գործընթացների և մեթոդների հավաքածու:
- Մինչ տեխնոլոգիայի ստեղծումը իշխում էր անհատական վարպետությունը:

Անհատական վարպետության կատարելագործման հետ աճում, զարգանում է նաև կոլեկտիվ ստեղծագործությունը, կոլեկտիվ վարպետությունը, որի խտացված արտահայտությունը հանդիսանում է տեխնոլոգիան:

1.2 Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիա

1.3

Արդի ժամանակաշրջանում փորձեր են կատարվում նորովի որոշել ինչպես դասավանդողի և սովորողի դերերը, այնպես էլ ուսուցման ընթացքում նրանց միջև փոխհարաբերության գործընթացը:

Քննադատական մտածողության զարգացման հիմնախնդիրը սահմանային է: Այն քննարկվում է դիդակտիկայի, դասավանդման մեթոդիկաների, կրթության փիլիսոփայության, տրամաբանության, հոգեբանության և այլ գիտությունների ոլորտների շրջանակներում:

Քննադատական մտածողության տեխնոլոգիան, ունենալով շատ հին պատմական արմատներ, 20-րդ դարի վերջին տասնամյակների ընթացքում ինքնուրույն զարգացում է ապրել և այսօր դարձել է առաջատար մանկավարժական տեխնոլոգիաներից մեկը:

Քննադատական մտածողությունը ինչ որ մեկ հմտություն չէ, այլ մի շարք հմտությունների համալիր:

Քննադատական մտածողությունը տերմինը առաջին հայացքից ընկալման մեջ բացասական երանգ ունի և հաճախ նույնացվում է «քննադատել» բառի հետ: Հաճախ քննադատական մտածողությունը նույնացվում է նույնիսկ վեճի, բանավեճի, կոնֆլիկտի հետ: Սակայն այն ստուգաբանվում է որպես «քննել» և «դատել» արմատների պարզ միավորում, այսինքն՝ մի հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից և դատել, եզրահանգում անել:

Քննադատական մտածողություն հնարավոր է ձևավորել նյութը պրոբլեմային մատուցելու, հակասական տեսակետներ ներկայացնելու, «կասկած սերմանելու», սովորողներին լրացուցիչ տեղեկատվություն որոնելու անհրաժեշտության առաջ կանգնեցնելու միջոցով:

Վաղ մանկությունից երեխայի մոտ պետք է զարգացնել ինչպես քննադատական, այնպես էլ ստեղծագործական մտածողությունը՝ հետևելով, որ դրանք գտնվեն զարգացման միևնույն ուղու վրա, միմյանց ուղեկցեն և ժամանակ առ ժամանակ փոխարինեն միմյանց ցանկացած մտածական ակտի ժամանակ: Եթե ինչ-որ մեկը արտահայտում է իր սեփական գաղափարը, ապա ինքնուրույն կերպով պետք է քննադատորեն իմաստավորի այն:

Ըստ քննադատական մտածողության տեսության՝ ուսուցման համակարգը բաղկացած է ուսուցման և ուսումնասիրության երեք փուլերից, որը հիմնված է մարդու ճանաչողության գիտական հետազոտությունների տվյալների վրա:

Այս մոդելը նկարագրում է ճանաչողական մի գործընթաց, ուր աշակերտները պետք է ներգրավվեն մինչև նյութը սովորելը (խթանում), նյութը սովորելու ընթացքում (իմաստավորում) և նյութը սովորելուց հետո (կշռադատում), որը կոչվում է ԽԻԿ համակարգ:

1.3 Նախագծային տեխնոլոգիան տարրական դասարանում

Աշխարհի մասշտաբով կատարված բազմաթիվ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ժամանակակից քաղաքականության, սպորտի, բիզնեսի, արվեստի առաջատարների մեծ մասն ունեն նախագծային մտածողություն: Նախագծային ուսուցման կենտրոնական հասկացությունը նախագիծն է՝ սովորողի համար կենսական կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծման մտահղացումը: Բառարաններում նախագիծ (լատիներեն՝ *proiectum* - առաջ նետված) բառը բացատրվում է որպես ինչ-որ փաստաթղթի կամ մտահղացման նախնական բովանդակություն, ծրագիր: Նախագծային մեթոդը առաջին անգամ երևան է եկել ԱՄՆ-ում՝ անցած դարի 20-ական թվականներին:

Ուսումնական նախագիծը ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի ձևակերպման:

Այն հնարավորություն է տալիս սովորողին բացահայտելու իր մեջ եղած ստեղծագործական ներուժը: Խմբային աշխատանքների՝ նախագծերի իրականացման պարագայում այն առաջարկում է մի շարք խնդիրների լուծումներ, ինչպես նաև զարգացնում է սովորողների մոտ ինչպես ինքնուրույն, այնպես էլ թիմային աշխատանք կազմակերպելու հմտություն: Ուսուցման նախագծային համակարգի հիմնական արժեքն այն է, որ այն աշակերտներին ուղղորդում է ոչ թե որոշակի թեմայի պարզ ուսումնասիրության, այլ կրթական արդյունք ստեղծելու գործընթացին:

Ժամանակակից մանկավարժության մեջ նախագծային ուսուցումը կրթության գործընթացի զարգացման կարևորագույն միջոցներից է համարվում: Հանդիսանալով ուսուցման նորարարական մոտեցում՝ նախագծային ուսուցումը լայն ճանաչում և կիրառություն է գտել ողջ աշխարհում՝ որպես կրթության գործնական – կողմնորոշիչ մեթոդաբանություն:

Նախագծային ուսուցումը նպատակային որոշակիացված գործունեություն է, որն իր մեջ ներառում է գործընթացի ժամանակային, արժեքային և արդյունքների որակավորման ու գնահատման պահանջներ: Նախագծային ուսուցումն իր էությանը ենթադրում է ուսուցման ողջ գործընթացի «նախագծում» (պլանավորում, ծրագրավորում, հեռանկարների որոշում), ուսուցման կազմակերպչական ձևերի մշակում, գիտելիքների հաղորդում:

Ուսումնական նախագիծն ունի իր իրականացման փուլերը.

1. հիմնահարցի ձևակերպում,
2. աշխատանքային խմբի (խմբերի) ձևավորում,
3. աշխատանքի բաժանում,
4. խմբերի, անհատների ինքնուրույն աշխատանք,
5. հետազոտություն,
6. ստացված արդյունքների ընթացիկ քննարկումներ
7. կատարված աշխատանքների ներկայացում - նախօրոք որոշվում է ներկայացման ձևը՝ տեսանյութ, ֆոտոշարք, հոդված,
8. սովորողների և խմբի աշխատանքների գնահատում- գնահատումը կատարվում է ն' դասավանդողի, ն' սովորողների կողմից, գնահատվում է յուրաքանչյուր սովորող, գնահատվում է ամբողջ խումբը,
9. հետագա աշխատանքի ուղիների նախանշում:

Նախագծային մեթոդի ուսուցման հիմք կարելի է ընդունել սովորողի ակտիվ գործունեությունը՝ հաշվի առնելով սովորողի անձնական հետաքրքրությունները կոնկրետ այդ թեմայի շուրջ: Այս մոտեցումը առավել նպատակային է տարրական դասարաններում աշակերտների մոտ՝ փնտրելու, պրպտելու ջիղը զարգացնելու նպատակն ունենալով: Էական նշանակություն ունի նաև այն, որ սովորողներին առաջարկվեն իրական կյանքից վերցված խնդիրներ, որոնք կարևոր են իրենց համար: Կրտսեր դպրոցականները սկսում են մտածել և տարորոշել, առանձնացնել իրենց շրջապատում կարևոր և անկերևոր երևույթները՝ ձևավորելով հետաքրքրությունների հստակ շրջանակ:

Այս խնդիրների լուծման համար սովորողին անհրաժեշտ կլինի կիրառել ինչպես մինչ այդ ունեցած գիտելիքները, այնպես էլ նոր գիտելիքներ, որոնք նա ձեռք կբերի աշխատանքի ընթացքում:

Սովորողի դերը նախագծային աշխատանքում էապես տարբերվում է. պասսիվ լսողից նա դառնում է ակտիվ մասնակից, հետազոտող, գործունեություն ծավալող: Նա ազատ է գործունեության ձևի ու տեսակի ընտրության մեջ: Տարրական դասարանում սովորողի համար այս մեթոդը թերևս նաև անհատական առանձնահատկություններ բացահայտելու լավագույն խթան է, սկիզբ:

Այսպիսով, ուսումնական նախագիծը ուսուցչի կողմից կազմակերպված և աշակերտների կողմից իրականացվող գործողությունների ամբողջությունն է:

Դասավանդողի դերը նախագծի իրականացման տարբեր փուլերում կարող է փոխվել: Բոլոր փուլերում էլ նա հանդես է գալիս որպես խորհրդատու, օգնական: Նա գիտելիքներ չի փոխանցում, այլ ապահովում է սովորողի ինքնագործունեությունը, այսինքն՝ խորհուրդներ է տալիս, հետևում է ընթացքին, ուղղորդում է: Ուսուցչի համար ուսումնական նախագիծը զարգացման ինտեգրված դիդակտիկ միջոց է, ուսուցում և դաստիարակություն, որը թույլ է տալիս զարգացնել նախագծային հատուկ կարողություններ ու հմտություններ՝ խնդրի առաջադրում, նպատակամղվածություն, իրականացվելիք պլաններ, վերլուծություն, ինքնաներկայացում, ինչպես նաև տեղեկատվության որոնում, ակադեմիական գիտելիքների օգտագործում:

Նախագիծը պարտադիր պետք է ունենա պարզ, իրականացվելիք, հասանելիք նպատակ: Տարրական դասարաններում այն պետք է ունենա տարիքային առանձնահատկությանը բնորոշ հետաքրքրության որոշակի շրջանակ:

Այսպիսով, նախագծային գործունեության մեջ ինքնակրթության և ինքնազարգացման մեխանիզմը գործողության մեջ է դրվում ձևավորված ակտիվ ճանաչողական հետաքրքրությունների և անձի զարգացման մակարդակի միջև առկա հակասությունների միջոցով: Այդ հակասությունը ծնվում է հետաքրքրությունները բավարարելու պահանջից: Նախագծային մեթոդն էլ թերևս նպաստում է

1.5 Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում

Վերջերս հաճախ է խոսվում ուսուցման կազմակերպման զանազան ձևերի ու մեթոդների և դրանց կիրառման անհրաժեշտության մասին: Ավանդական հանրակրթական համակարգում մինչև օրս կարևորվել է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդումն ու աշակերտների կողմից դրանց մտապահման պարտավորությունը: Նմանատիպ մոտեցումը հենված լինելով առավելապես ուսուցման դոգմատիկ մեթոդների վրա հաճախ հանգեցրել է նրան, որ արժևորվել է ոչ թե ուսումնառողի կողմից ուսումնական նյութի հասկացումը, այլ նյութն անգիր անելու և այն նույնությամբ վերարտադրելու հմտությունները:

Ներկայումս, առավել քան երբևէ, ուսումնական գործընթացում կարևորվում է այնպիսի մեթոդների կիրառումը, որոնք հնարավորություն կտան ուսումնառողներին ինքնուրույն բացահայտելու և ձևակերպելու հրամցվող գիտելիքները:

Համագործակցային ուսուցումը նպաստում է կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն: Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս [16, էջ 175]: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար» [3, էջ 18]:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը: Համագործակցային ուսուցման տարրերն, ըստ Ջոնսոնների, հիմնականում հինգն են.
- դրական փոխկախվածություն,

- դեմ առ դեմ փոխազդեցություն,
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,
- խմբային գործընթացի մշակում:

Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս մեկը: Պասի Սահլբերգը փոխներգործուն (ինտերակտիվ) առաջադրանքը դիտարկում է որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: «Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ» [2, էջ 17-24]:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: «Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին» [4, էջ 145]:

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաձանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ.

«Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև՝ երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում» [5, էջ 48]:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը: Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն,

խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք և այլ մեթոդներ:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան մեթոդների տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

1.5 Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիա

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան կոչված է զարգացնել ուսուցման գործընթացում սովորողների ինքնուրույն որոնողական գործունեությունը, համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Պրոբլեմային ուսուցումը այնպիսի ձևերից է, երբ ուսումնական նյութը, գիտելիքները ոչ թե մատուցվում են պատրաստի ձևով և երեխային մնում է միայն դրանք մտապահել և վերարտադրել, այլ այն առաջարկվում է որպես պրոբլեմ, խնդիր, որի լուծման հարցում ընդգրկվում են նաև սովորողները: «Մենք այս կամ այն եղանակով բարդացնում ենք մտածողության աշխատանքը մինչև որոշակի մակարդակի հասցնելը, որն էլ սովորողը ընդունում է որպես պրոբլեմային իրավիճակ: Օրինակ՝ տալիս ենք խնդիր, որտեղ պակասում են տվյալները, դրանք պետք է ձեռք բերել՝ կռահելով և ոչ թե որոնելով տեղեկատուի մեջ: Կռահումն ավելի բարդ է, քան որոնումը որևէ գրքում: Կռահումն էլ հենց պրոբլեմայնության տարրն է» [10, էջ 29]:

Պրոբլեմային ուսուցման կարևորագույն հատվածն է պրոբլեմային իրավիճակը, որը ստեղծվում է ուսուցչի կողմից նախքան ուսումնական նյութի հաղորդումը: Ուսուցիչն առաջարկում է սովորողներին պրոբլեմային հարց, որի շնորհիվ խթանում է սովորողների հետաքրքրասիրությունը, առաջարկված հարցի պատասխան փնտրելու ցանկությունը: Պրոբլեմային իրավիճակ կարող է ձևավորվել, երբ

- նոր գիտելիքը իմաստավորելու կամ ինչ-որ գործողություն կատարելու համար սովորողի ունեցած գիտելիքներն ու կարողությունները չեն բավարարում:
- ձևավորվում է անհամատեղելիություն ունեցած գիտելիքների, կարողությունների ու նոր պահանջների, հին ու նոր տեղեկությունների ու փաստերի միջև,
- հին գիտելիքները պետք է լինում կիրառել նոր իրավիճակներում և այլն:

Պրոբլեմային ուսուցման առավելություններն են .

- աշակերտները յուրացնում են գիտելիքների համակարգը՝ համապատասխան կարողությունների և հմտությունների հետ մեկտեղ, ինտենսիվ զարգանում են նրանց մտավոր ընդունակությունները, ակտիվանում է սովորողների մտավոր զարգացումը,
- ակտիվանում է ուսումնական գործընթացը
- ձևավորվում է հետաքրքրություն ուսումնական նյութի կամ գործընթացի հանդեպ,
- ձևավորվում և զարգանում են սովորողների ճանաչողական կարողությունները,
- աշակերտները սովորում են որոնողական աշխատանք կատարել,
- ավելի լավ են ձևավորվում պատճառահետևանքային կապերը, ինչը նպաստում է մտածողության ձևավորմանը,
- երեխաներն ավելի լավ են մտապահում իրենց սովորածը,

- պրոբլեմային ուսուցումը նպաստում է բազմաթիվ որակների ձևավորմանը և զարգացմանը, դրանք են՝ հաղորդակցումը, համագործակցությունը, խոսելու, լսելու, միտքը ձևակերպելու, գաղափարը հստակեցնելու և հիմնավորելու կարողությունների ձևավորումը:

Պրոբլեմային ուսուցման միակ թերությունը նրա ժամանակատար լինելն է:

Տարրական դասարաններում պրոբլեմային ուսուցման շնորհիվ շնորհիվ աշակերտը հնարավորություն է ստանում հայտնել իր համոզմունքը, կարծիքը: Զարգանում է քննադատական մտածողությունը, դատողություններ, եզրահանգումներ անելու կարողությունը, հանդուրժողականությունը միմյանց կարծիքների նկատմամբ: Ուսուցման գործընթացում պրոբլեմային խնդիր դնելը կիրառվում է տարբեր առարկաների դասագործընթացում, ինչի նպատակն է սովորողների որոնողական, հետազոտողական կարողությունների ձևավորումը [1, էջ 74-75]:

Պրոբլեմային հանձնարարությունների մեթոդ

Պրոբլեմային հանձնարարությունների մեթոդը հիմնված է դասավանդողի կողմից պրոբլեմային իրավիճակների ստեղծման և աշակերտների ակտիվ ճանաչողական գործունեության վրա: Դրա էությունը կայանում է կոնկրետ իրավիճակի և հետագա որոշումների ընդունման վերլուծության և գնահատման մեջ:

Ակնհայտ է, որ պրոբլեմային իրադրությունը ոչ թե ամեն տեսակ իմացական դժվարությունն է, այլ այն դժվարությունը, որը ծագում է հակասության հաղթահարման գործընթացում [6, էջ 280]: Ուստի, եթե որոշում է կայացվել պրոբլեմային հանձնարարությունների մեթոդի օգտագործման վերաբերյալ, ապա ամենից առաջ խորհուրդ է տրվում տիրապետել պրոբլեմային իրավիճակների ստեղծման հնարներին: Դրանք են [8, էջ 95].

- աշակերտներին պետք է բերել հակասության և առաջարկել ինքնուրույն լուծել խնդիրը,
- մեկնաբանվում է պրակտիկ գործունեության մեջ հանդիպվող հակասությունները,
- շարադրվում է նույն հարցի վերաբերյալ բոլոր տեսակետները,
- աշակերտներին առաջարկվում է երևույթը դիտել տարբեր դիրքերից, տեսանկյուններից (օրինակ՝ իրավագետի, մանկավարժի, տնտեսագետի, ֆինանսիստի և այլն),
- որոշվում է տեսական և գործնական հիմնահարցերը,
- դրվում է պրոբլեմային խնդիր (օրինակ՝ ոչ բավարար կամ ավելորդ սկզբնական տվյալներով, ոչ որոշակի հարցադրմամբ, հակասական տվյալներով, լուծման հոգեբանական «իներցիայի» հաղթահարման համար անհրաժեշտ ժամանակահատվածի գիտակցաբար սխալ նախատմամբ և այլն):

1.7 Խաղային տեխնոլոգիաները տարրական դպրոցում

Խաղը կարելի է դիտարկել և որպես ուսուցման մեթոդ, և որպես ուսուցման ձև, և որպես ինքնուրույն խաղային գործունեություն, և որպես երեխայի անձնավորության համակողմանի զարգացման միջոց:

Տարրական դպրոցում խաղը կիրառվում է.

- որպես ինքնուրույն տեխնոլոգիա,
- որպես առավել մեծ ու ընդհանուր համագործակցային տեխնոլոգիայի մի տարր,
- որպես արտադասարանական աշխատանքի տեխնոլոգիա,
- որպես սովորողների ծանրաբեռնվածության բեռնաթափման միջոց:

Ի տարբերություն առօրյա խաղերի՝ մանկավարժական խաղն ունի որոշակի հատկանիշներ: Այն ունի նախօրոք հստակեցված ուսուցման նպատակ և դրան համապատասխան՝ կանխատեսվող

մանկավարժական արդյունք: Ավանդական ուսումնական գործընթացի ժամանակ գիտելիքի հիմնական աղբյուր հանդիսանում է ուսուցիչը, իսկ խաղի ժամանակ գիտելիքի որոշակի աղբյուր չկա, ուսումնական գործընթացն իրականացվում է մենախոսության կամ երկխոսության միջոցով, իսկ խաղն իրականացվում է գործողությունների միջոցով սովորում և սովորեցնում են իրար: Խաղային գործունեության ժամանակ մասնակիցը ազատ ու անկաշկանդ է, քանի որ նա հանդես է գալիս որպես դերակատար և չի ճնշվում սեփական «Ես»-ը արտահայտելու մտքից:

Դասի ժամանակ խաղային գործունեությունն իրականացվում է հետևյալ քայլերով.

- սովորողի առջև խաղի տեսքով դրվում է դիդակտիկական որոշակի նպատակ,
- ուսումնական գործունեությունը ենթարկվում է խաղի կանոններին,
- ուսումնական նյութն օգտագործվում է որպես խաղի միջոց:

Ուսուցման խաղային մեթոդը խաղ չէ բառի բուն իմաստով: Այն ավելի շուտ հանձնարարություն է, որն ունի դիդակտիկական, ճանաչողական նշանակություն: Ուսուցման գործընթացին խաղային ձև տալն ուղեկցվում է խաղի մեկ կամ մի քանի տարրեր ներմուծելու ճանապարհով. խաղային սյուժե, բովանդակություն, դերեր, որոշակի կանոնների կատարման միջոցով նպատակին հասնելու արդյունք և այլն:

Չմոռանանք, որ վեց տարեկան երեխաների ուսումնափնացական դրդապատճառն առավել հաջողությամբ ձևավորվում է նրանց համար հետաքրքիր ուսումնական խաղերի միջոցով: Այսօր ուսուցման տեխնոլոգիաները հասել են այն մակարդակին, որ ցանկացած գիտելիք կարող է ձեռք բերել դրանց կիրառմամբ: Այս պարագայում բոլորին հետաքրքրում է ոչ միայն ուսուցման բովանդակության, այլև մեթոդների և միջոցների խնդիրը: Սակայն չպետք է մոռանալ, որ ողջ ուսումնական գործընթացը չի կարելի վերածել խաղի. երեխան պետք է նաև ուսումնական գործընթացի մեջ լրջություն տեսնի և փորձի յուրացնել կամ հաղթահարել նաև «լուրջ» նպատակներ հետապնդող ուսումնական գործունեության խնդիրները: Աստիճանաբար, դասարանից դասարան պետք է սահմանափակել խաղի գերակայող դերը:

Այսպիսով, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս ուսումնառողի համար անընդհատ նորացվող դաստիարակչական և ուսումնական իրադրությունների այնպիսի պայմաններ ստեղծել, որտեղ իրականանում է նրա անձի ամբողջական ներգրավումը գործունեության և փոխադարձ շփման գործընթացին, որն ակտիվացնում է նրա ներքին կարողությունները՝ դրանով իսկ նպաստելով ներքին հասունացմանը: Դասը կազմակերպելով ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներով ապահովվում է աշակերտների եռամակարդակ ուսուցման պահանջները: Առաջադրանքների ընտրությունը համապատասխանեցնելով խմբի կարողություններին՝ թույլ է տալիս աշակերտներին ավելի ոգևորվել և ձգտել ավելի: Ժամանակակից տեխնոլոգիաներով կազմակերպած դասը հնարավորություն է ընձեռում աշակերտներին դարձնել ավելի հոգատար, բանիմաց, հետազոտող, ինքնուրույն, համարձակ, համագործակցող, դասին ներգարավել բոլորին՝ անկախ իրենց ընդունակությունների մակարդակից՝ դարձնելով յուրաքանչյուրին խմբի լիարժեք անդամ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտության և տեխնիկայի արագընթաց զարգացումներն ու դրան համապատասխան հասարակական պահանջարկը թելադրում է տնտեսության բոլոր ճյուղերի վերակառուցում, որը հենված է օրեցօր փոփոխվող նոր տեխնոլոգիաների կիրառման վրա: Յուրաքանչյուր նորի ստեղծման անհրաժեշտություն միջնորդավորված ձևով ենթադրում է կրթության որակի բարձրացում, որի հիմքերը պետք է դրվեն բոլոր ուսումնական հաստատություններում, որտեղ գիտելիքների մտապահման ու վերարտադրման պահանջին զուգընթաց անհրաժեշտություն է առաջանում ուսումնառողների մեջ ձևավորել և զարգացնել ինքնուրույն մտածելու, կողմնորոշվելու և գործելու, ստեղծելու, վերաբերմունք, դիրքորոշում հայտնելու կարողություններ:

Այսպիսով, ավարտելով հետազոտական աշխատանքը, եկել ենք հետևյալ եզրահանգումների.

- Մանկավարժական տեխնոլոգիան ներկայացվում է որպես ուսուցման և դաստիարակության գործընթացի տեսականորեն հիմնավորված մեթոդների ու միջոցների, գործողությունների համախումբ, որը թույլ է տալիս հաջողությամբ իրականացնել կրթական նպատակները:
- Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս իրականացնել կրտսեր դպրոցում ակտիվ, անձնային կողմնորոշում ունեցող ուսուցում, որը նպաստում է հաղորդակցման և գիտակցական զարգացմանը:
- Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիայի նախագծման ժամանակ շատ կարևոր է ոչ այնքան ուսուցման գործընթացի ռեժիմն ու կարգապահությունը, որքան ուսումնառողների հետ դասավանդողի համատեղ ուսումնական մասնագիտական գործունեության մեթոդը:
- Տարրական դպրոցում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներով կազմակերպված դասերն ի գորու են բարձրացնել սովորելու մոտիվացիան, նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը, մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը:
- Տարրական դպրոցում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներով կազմակերպված դասերն ի գորու են բարելավել դասի անցկացման մեթոդները, ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները, պլանավորել և համակարգել դասվարի աշխատանքը, արագ և արդյունավետ պատրաստվել դասին:
- Տարրական դասարաններում մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը բարձրացնում է աշակերտների ներգրավվածությունը դասին և հնարավորություն է տալիս իրականացնել տարբերակված ուսուցում:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Ա. Զ., Տարրական կրթության մանկավարժություն (Ուսումնամեթոդական ձեռնարկ), <<Տիգրան Մեծ>>, Երևան, 2017, էջ 74-75:
2. Խաչատրյան Ս. Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին (համագործակցային ուսուցում), <<Նախաշավիղ>>, 1. 2003, <<Տիգրան Մեծ>>, Երևան:
3. Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006:
4. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնատոյյան Ա., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, <<Տիգրան Մեծ>>հրատ., 2004:
5. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, <<Անտարես>> հրատ., 2006:
6. Մանուկյան Ս. Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն (Նոր դասընթաց), Զանգակ-97 հր., Երևան, 2005, էջ 280:
7. Պետրոսյան Հ. Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012:
8. Պետրոսյան Հ. Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, <<Ան-Ձոն>>, 2008:
9. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, <<Նոյյան տապան>> հրատ., 2005:
10. Никандров Н. Д., Об активизации учебной деятельности, <<Вестник вушей щколы>>, 1983, No 8, с. 29.
11. https://youtu.be/ Uwlq_c4nMA
12. <https://learningapps.org/watch?v=pjpp5vx4n21>
13. <https://learningapps.org/watch?v=pkpg3iezt21>
14. <https://learningapps.org/watch?v=prqvmmmqj21>